

# ՅԱԿԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ

## ՆԱՂԱՇԻ ԵՐԿՈՒ ԿԻՍԱՏԻՎ ՏԱՂԵՐ.

Նկատերինոգարից պ. Աւետիք Մամիկոն-  
ևս Մայր Աթոռի Ծեմարանի բացման 25-րդ  
տարեգարձի առթիւ նուէր է ուղարկել մի  
հետազիր տաղարան, որը թերթելիս նկատե-  
ցինք: ի միջի այլ հետաքրթական նիւթերից,  
Մկրտչ Նաղաշի երկու տաղեր՝ կիսով չափ  
մայն տաղուած պ. Կ. Կոստանեանի ժողովա-  
ծով մէջ: \* որ յառաջ ենք բերում լրու-  
թեամբ ինչպէս կայ այս տաղարանի մէջ:  
Նախ աւրհնեմբ» տաղի այն տները միայն  
յայնի են պ. Կոստանեանին, որոնց սկզբնա-  
տառերը «Նաղաշ» անունն են կազմում: մինչ  
յաջորդ տների «սարկափագե», սկզբնատառե-  
րից պէտք է հետեւեցնել: որ երգին այդ տա-  
ղը իւր սարկաւագութեան ժամանակն է զը-  
րել և որ ուրեմն դա նորա ամենաշին գոր-  
ծերից է: Դորանով ոյժ է ստանում գուցէ  
նաև այն ենթագրութիւնը, թէ 1418թ. ին  
դրուած Յայսմաւուրի զրիչ Մկրտչ սար-  
կաւագը Նաղաշն է: \*\*: Թէ ինչպէս պէտք է  
խապէլ յաջորդ տների սկզբնատառերը՝ մենք  
զժուարանում ենք ասել: Այդ աները ձե-  
ռազդի մէջ աւելի աղաւաղուած են քան  
նախորդները \*\*\*: Միւս «Երազ է սուտ» տա-  
ղի շարունակութիւնը՝ Հնչ շահ է քո զուր  
դասելը, կայ, ինչպէս պ. Կոստանեան յի-  
շումէ \*\*\*\*, Վիհննացի Միիթարեանց հ. 263  
և 531 ձեռագիրների մէջ + իրեւ առանձին

\* Մկրտչ Նաղաշ եւ իւր սաղերը. Պարագապատ  
1898. եր. 3 և 31:

\*\* նոյն եր. 3.

\*\*\* Տաղի մի բանի օտար բառերի բացառութիւնը  
և ծանօթութիւնները պ. Հ. Անտեսն և գրել:

\*\*\*\* եր. 39.

† Յուցակ հայ. ճեղացրաց մատենադարանի Միի-  
թամաց ի Վիհննա. — Հ. Յ. Տաշիան. Վիհննա. 1895 եր.  
677 և 1001.

տաղը իսկ մեր ձեռագրի մէջ կցուած է ան-  
միջապէս յիշեալ տաղին:

Այս ձեռագիրը մի ամբողջ գործ չէ:  
այլ չորս կտորներից է բաղկացած (միջան-  
կեալ թերթերը չհաշուելով), որոնցից եր-  
րորդը Նարեկացու մի քանի ազօմքներն է:  
աւելի մաքուր գրուած և մնացեալի հետ  
առնչութիւն չունեցող մի հատուած. իսկ  
միւսները տաղերը այլ և այլ զրչութեամբ:  
«Նախ աւրհնեմբ» տաղը գտնուում է առա-  
ջին մասի և Երազ է սուտ. Երկրորդ մասի  
մէջ Սոցանից առաջնի մի թարթը ընկած է  
եղել և յետոյ ուրիշ ձեռքով աւելացրած:  
Ձեռագրի վերջում մի «Ակոր Սըսցի Ռետորի»  
հետաքրթական ստանաւորը կայ, որ խրնդ-  
րում է օգորմի տալ «Մընդրովի բանիս Մի-  
նաս Մըզտեսուն երեցփոխանին, որ ժըտեաց  
ի սոյն. և ամենուն, որը են Ղարայսուն»: այլ և  
մի առեղծուածային ժմուական ևս տալիս է  
«զթորքում զորքան հայկազուն, զարարարա-  
կապ թըլիական հայուն, այր գեկտեմիերի  
հըռոմայ ամնուն»: բայց ամբողջ ձեռագիրը  
աւելի մանրամասն հետազօտութեան կարօտ  
է. մենք բաւականանում ենք այս երկու  
տաղը բերելով, իրեւ մի փոքրիկ յաւելուած  
մեր բաղմաշխատ ուսուցչի երկասիրութեան:  
նորին Նաղաշ վարդապետի աս՝ (ացեալ) \*

Երազ է և սուտ, եղբայրք, յաշխարհիս բա-  
ներն ի լըման-  
ուր են թագաւորք, Եփանք, պարոնայք ու սուլ-  
թան ու խանք-  
Շինեցն բերթ ու քաղաք, գարպըսներ, ու շատ  
դատեցան:

\* Նախինքրաց տաղն և Շնանեկ մնջուրիւն. — Եկր-  
րաւական բաներ ի Նաղաշ վարդապետի տացեալ վիր-  
եագրով:

Յետոյ գէմ՝ անտէր թողին, ու մտան ի հող՝ և ի  
զընտան։  
Դասանաց՝ մի խարեր մեղաւք՝ մի դասեր անտան-  
նոյ նըման։  
Մի գիրկ աշխարհիս ածեր, մի կարծես թէ քեղ  
տի մըման։  
Ըուտով քեզ խնդիր կուգան, ու խոցեն ըղչողիդ  
մահուան։  
Հոգիդ բաժանի ի քէն, ու մընայ մարմնադ ի զըն-  
տան։  
Աշխարհա գէմ՝ վաւփայ չունի ոչ արեր է մար-  
դոյ բարի։  
Աւուրք մի խընդալ կուտայ, բայց յետոյ է զառն  
ու լեղի։  
Աշխարհիս մի հաւատար, զաւրն ի բուն գէմ սուտ  
կու խաւսի։  
Զինչ որ խոստանայ բրնաւ չի պահէ զիւր խաւորն  
ի տեղի։  
Հատոց խոստանայ հանդիսաւ, ու պահէ երեր-  
մանի։  
Հատոց մեծութիւն ասաց, ու պահէ աղքատ և  
անաւթի։  
Խորէ թէ ուրախ պահէմ ու առնեմ զօրերդ ի բարի,  
Ի մէջն ի ծովուն տանի ու պահէ ի տարտարոսի։  
Աւուրք մի վերայ անցնի լուկ, մահուն աւրըն  
հասանի։  
Յարեւեն դատարկ հանէ ու առնէ ողորմ ու լալի։  
Աւազ զայն աղուոր մանկալիքն որ զարձան ի հող  
և ի փոշի։  
Երեխանց ժամանակն անցաւ զէրդ զերազ մըթան  
գիշերի։  
Երբ որ զայդ դիտես, գերի, որ քո սէրդ ի սուք  
տի փոխի։  
Զաշխարհը գու մի սիրեր առաւել քան զկարն  
աւելի։  
Մալի հասրաթ մի լինիր, մեծութիւնըն քեզ չի  
պիտի։  
Անիս կերակուր, հանգերձ աւելին քեզ ցու կու  
լինի։  
Ի ողորմելի նախաց, գու ջանայ ու գործէ բարի։  
Զքո խրատըդ գու լըսէ, որ այլոց ի գործ անցանի։  
Գիտէիր թէ լողորդ էիր, նայ մեղաց գետըն կու  
տանի։  
Ի հոգ աշխարհիս դատես, շահ չունիս քան զենն  
աւելի։  
Ի՞նչ շահէ քո զուր դատելդ, երբ յաւտար եր-  
կիր կուտանեն։  
Թէ շատ է թէ քիչ ջանաս, քեզ միայն պատահըդ է,  
բաժին։  
Թէ ամէն աշխարհիս տիրես, քո տեղիբդ է քայլ մի  
գետին։  
Որչափ վայելես զաշխարհա, տի վըտիս ի ներքոյ  
հողին։  
Է՛ ողորմելի նախաց, հետեւիր աղքատ Լաղարին։  
Աղքատ բարեգործ լավ է, քան հազար հարըստու-  
թին։  
Մեծատունըն վայ ասաց կենարար նրդին Միածին,  
Աղքատ ու պանդուխատ կացիր, որ առնուս անանց  
մեծութիւն։

Գերի Աղամայ որդիք, յաւթեանս խափիլ մի լի-  
նիք,  
Ի յայս աւթեանս եկին շատ մարդիք ու ձեզ նը-  
մանիք.  
Նորայ փոշիման գնացին և դուք այլ կերթաք, մի  
խարիք.  
Անոնց որ յետ ձեզ կուգան աւրինակ չարեաց մի  
լինիք.  
Հազար զեն եհար, եղբայրք, զեն եհար, անհոգ  
մի կենաք.  
Անցաւ ժամանակն ու դնաց և աւրերըս մեզ չի  
մընաց.  
Յառաջին մարդոյն ի հետ միտք արայ զամեն կար-  
գարար,  
Ռամիկ թագաւորք և իշխանք, որ ի հող զարձան  
հաւատար,  
Եղաւոր ի սըրտէ քընէ (քննէ?) որ եկաւ աւրերըտ  
ի վըճար,  
Պարտէ քեզ թատպիր առնել ու դընել ըզկամքդ  
ի զընալ  
Եհաս քեզ մահու պատգամ, յայնպէս և ոչ իմա-  
ցար,  
Տարեալ թաղեցիր զեղբայրդ, նոյն կայ քեզ, և դու  
չգիտացար,  
Ի քեզ թէ նայիս, նախա՛ց, քան զամէն եւ դու  
խելադար,  
Նըման ալեկոն նաւի երերուն շըջես դու մոլար,  
Եթէ ճար զիտես, եղբայր, դու այսաւը վաղըն մի  
մնար,  
Մահուն աւրըն թէզ կուգայ, որ չի տայ քեզ  
պահմ, յամենալ,

ՏԵՂ. ՀԱՐՍԱՆԵԱՅ և ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱՄԵ-  
ՆԱՅՆ ՄԱՐԴԿԱՆ։

Նախ աւրչնեմք զԱստուածութիւնն  
Որ ստեղծ զիրեշտակս ի լուսոյն.  
ԶԱգամ արար ի հողոյ  
և բզ կինն իւր ի կողոյ,  
Ահայ հառըն գոյր գարնան,  
Փեսին տեսնէր խիստ խնտման,  
Յորտեղ սիրելիք որ կան  
Ամէնն ի հարսնիք թող գան,  
Վամպար է վասեր փեսայն,  
Փեսապաւը մոմեն գառման,  
Ամենուն բարե կուտան,  
Թող երկու ընձ (1) ծերանան,  
Ա. (ս)օր է մեզ օր խընդման,  
Հաւասար սիրելիքս որ կան  
Հարսն են առեր ու կերդան,  
Թող երկուքն ի յիրար խընտան,  
Հարպաթ 2 լեցու տուր կըթզան,  
Եղբայր դու խընէ փեսայն,

Փեսաղբար հարսն ու փեսայն  
Թող երեքն յիրար խընտան:  
Սարկաւագունք ժողովեցան:  
Քո սիրուն եղեն գուսան.  
Շատ ապրի հարսն ու փեսայն  
Թող երեքն յիրար խընտան:  
Աւրելք հրամայէ զայս բան,  
Թէ նոր հարսն և իւր փեսայն  
Զ. փեսաղբարըն լաւ պատուեն  
Եւ լինին ձորս ու ծառայն:  
Հարունից երկնից արբայն  
Եւ սուրբըն պառզյն տըզայն  
Երկուքն իջեալ Յորդանան:  
Մըկըրտեաց զնա Յովան:  
Կանջեաց աչեղ քաղցրածայն  
Այն տէրըն Յիսուս արբայն՝  
Կանայք շատ տղայք ծընան:  
Տէ իւր կնկայհաւը նըման:  
Առաւաւ ի լոյս նըման  
Լուսափայլ կենաց փեսայն:  
Փեսաղբայրըն պատուական.  
Եւ յերկուսն յիրար նըման:  
Փեսայն հարաւոյն կողման  
Իիրսիսի հարսն նըման.  
Երկուսն ի յիրար եկան,  
Աչայ ժամ եղեւ գարնան:  
Էման ի յերկինսն թուի դարձան,  
Զանձրե քաղցրահամ ցաւզան,  
Որ երկիրը ծընանի:  
Մաղկունք զարդարեալ ցընձան,  
Գովեմք զշարսն ու փեսայն,  
Սոբայ Յակոբա(, յ) նըման.  
Շալայ 2 ի միջաց ինտան,  
Ծնաւզ լինին շատ մանկան:  
Իւր երարքն առ բնք եկան,  
Զ. փեսաղբայրն առին զփեսայն.  
Վաղինեքն ի յորս ելան  
Հաւասար ի ճանփա(, յ) մըտան:  
Ես պատմեմ մէկ զարմացք բան,  
Որ ամենն աշակ տեսան.  
Հայ յորս յորս գաշն ելան,  
Մէկ մի համբուրեաց զփեսայն,  
Սատազա 5 հս քեզ երթամ,  
Ուր կայիր դու ասշափ ժամ.  
Քեզ եմ պահեր արմաղան և,  
Հազար որսու չես տար զայն:  
Աստ մնյար իւր գու սիրական,  
Զանայ գու բեր զայն.

Տես ըզ հանգամայս որ կան,  
Ի հոս չեն կենար կերպան:  
Յայնժամ ելաւ քահան(ան)  
Երեք զանգին արմաղան.  
Աֆարին և իւր ծընօղին,  
Որ է աղջիկ և կուսան:  
Եւ երկուքն առեալ տարան:  
Ի յեկեղեցին մոտան,  
Խաչըւըն պատկեցան:  
Զուգակից հալալ սեղան:  
Զայնեցէք ըզկուվագան:  
Լարեն զտապլայն 2 և զշատուն 5,  
Եւ հետ կանչեն զթարլալան,  
Որ հարսնիքս ուրախանան,  
Կ. Դ.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴՈՂՐՈՒԹԻՒՆ

Ներկա 1900 թիվանան

**Մ Ճ Ա Կ**  
(28-ՐԴ ՏԱՐԻ)

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԺԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԻ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ  
ՈՒՂԴՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴՈՂՐՈՒԹԻՒՆ. «Մ շ ա կ ի» տարեկան  
գինը 10 բուրքի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝  
9 ը., ինն և ութ ամսվանը՝ 8 ը., եօթ ամսվանը՝  
7 ը., վեց ամսվանը՝ 6 ը., հինգ ամսվանը՝ 5 ը.,  
չորս ամսվանը՝ 4 ը., երեք ամսվանը՝ 3 ը., եր-  
կու ամսվանը՝ 2 ը., և մի ամսվանը՝ 1 բուրքի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՈՂՐՈՒԹԻՒՆ.  
Ա մէր եկայի բաժանորդները պէտք է վճարեն  
տարեկան 6 գուլար. Եւ բոլոյ բաժանորդ-  
ները՝ 30 գրամկ. Պարսկակատանի բաժանորդ-  
ները 10 բուրքի:

«ՄՇԱԿԻ», գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՑԱՆԸ  
(Բաղարնայս և Բարօնսկայա փողոցների անկեւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից, «ՄՇԱԿԻ»,  
դրվելու համար, և առհասարակ նամակներ և  
ծրագրներ ուղարկելին, պէտք է զիմել հետեւաւ  
հասցեով ՏԻՓԼԻՍ. Ռեդակու «ՄՇԱԿԻ», իսկ  
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal  
arménien „MCHAK“.

Յայտարարութիւնները ընդունվում են բո-  
լոր լեզուներով:

1. Ցիստ եւ ս. Կարապէս;

2. Արար. ի աշակ Ալլահ, որի աղաւակեալ ձեւն է

ալլահ «այս Աստված, երանի րէ, մարդին որ»:

3. Արար. Սահակ և «զորմուրիւն»:

4. Թուրք. արմաղան «առիշ»:

4. Գր. ա մ կ ր ի ն կ ի ց ե ս:

5. Գր. բ ա ր չ ա մ ի վ ի ո ւ ր ո ւ կ ի չ :

5. Գր. չ ա ս ր ս ե ր ց, ե ղ ա մ ա կ :